
ՊԲՀ-ի ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԿԱՐԾԻՔԸ
ԷՐԼ Ռ. ԱՆԴԵՐՍՈՆԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Պատմաբանասիրական հանդեսի» էջերում տպագրելով արդի ամերիկյան հետազոտող, «Սասնա ծռեր» հերոսավեպի քաջատեղյակ Է. Անդերսոնի Բոստոնի «Արմենիեն Ռեվյու»-ում հրատարակված գրախոսության տարբերակը, կամենում ենք որոշ նկատառումներ հայտնել արծարծված հարցերի վերաբերյալ:

1. Նախ՝ Մալր տեղանվան մասին:

Հայ էպոսագիտության մեջ «Սասնա ծռերի» առաջին երկու պատումների գրառողների կողմից 1870–1890-ական թթ. կարծիք է հայտնվել Մալրը՝ Մուսուլի (Գ. Սրվանձտյանց) կամ Մծուրնի հետ (Մ. Աբեղյան) նույնացման:

Բայց նույն Մ. Աբեղյանի 1906–1908 թթ. հրատարակած «Հայ ժողովրդական վեպը» մենագրության մեջ Մալրը հասկացվել է իր բուն՝ «Եգիպտոս» իմաստով: Եվ դա բնավ էլ Ա. Եղիազարյանի մենաշնորհը չէ: Այդ հաստատել են XVI դ. պորտուգալացի ճանապարհորդներ Մեստրե Աֆոնսոն ու Անտոնիո Տենրեյրոն և նրանց ուղեկցող ու Դավթի պատմությունը պատմող հայորդի թարգմանիչը, որը հաղորդել է, որ Դավիթը կովել է Կահիրեի սուլթանի հետ և հաղթել:

2. Մի ներքին հիացում է զգացվում Ա. Եղիազարյանի կարծիքի նկատմամբ, որ իբր թե «Սասնա ծռերը» ձևավորվել է արաբական տիրապետության IX–XI դարերի իրադարձությունների ազդեցությամբ:

Արաբական տիրապետությունների ազդեցությունը «Սասնա ծռերի» վրա բացահայտ նկատելի է թե՛ Բաղդադի արաբական խալիֆայության (VII–IX դդ) և թե՛ Մսրա մելիքների, այսինքն՝ Եգիպտոսի Էտյան կամ Էյուրյան տիրապետողների ժամանակաշրջանների ազդեցությունը, այսինքն՝ VII–XIII դարերը, որ միանգամայն արդարացիորեն հավաստել էր Մ. Աբեղյանը:

Ջանց է առնվել Ռշտունյաց (այդ թվում նաև՝ Մոկաց) տեր Թեոդորոս Ռշտունու հսկայական քաղաքական գործունեությունը VII դ., սասունցի Դադայի որդի Հովանի ապստամբությունը VIII դ. կեսերին՝ վկայված արաբական գրավոր աղբյուրներում, հաշվի չեն առնվել նաև X–XIII դդ. Հարավային Հայաստանի հայ-եգիպտական հարաբերությունները՝ դրսևորված Մեծ Մհեր և Մսրամելիք, Դավիթ և Մսրամելիք վիպական իրադարձություններում:

3. Պատճառն այն է, որ Ա. Եղիազարյանը ճիշտ չի ըմբռնել «Սասնա ծռերի» բուն ժանրային նկարագիրը: Մեր անձնական գրույցների ժամանակ նա քանիցս շեշտել է, որ «Սասնա ծռերը» միջնադարյան էպոս է:

«Սասնա ծռերը» իր վիպական չորս սերունդների պատմություններով հորինվել է երեք հնավանդ առասպելների հիմքի վրա: Առաջինը՝ սրբազան երկվորյակների առասպելն է՝ ընկած վեպի առաջին ճյուղի հիմքում: Այն ոչ միայն «Սասնա ծռերում», այլև հայ վիպական ավանդության մեջ վկայված բոլոր հին ու միջնադարյան էպոսների («Վիպասանք», «Պարսից պատերազմ») ելակետային պատմությունն է, ինչպես մեր ցուցումներով բոլորովին վերջերս երկվորյակների առասպելը հայ վիպական ավանդության մեջ հետազոտեց մեր ասպիրանտ Լ. Ղոնջյանն իր թեկնածուական ատենախոսության մեջ:

Վեպի երկրորդ և չորրորդ՝ Մեծ Մհերի և Փոքր Մհերի ճյուղերի հիմքում ընկած են Միթրա-Միհր աստծո առասպելներն ու պաշտամունքի հիշատակները: Բսկ երրորդ՝ Դավթի վիպական ճյուղի նախահիմքում ընկած է հնդեվրոպական ամպրոպային կամ գլխավոր առասպելը՝ իր ցայտուն տարբերակներով: Այս երեք առասպելներն էլ դրսևորված են «Սասնա ծռերում» խիստ կերպարանափոխված, իսկ Դավթի ճյուղում այդ դրսևորումները հանդես են գալիս անուղղակի ձևերով: Դավթի վեպի առասպելաբանական

հիմքը հնդեվրոպական այլ առասպելների համեմատությամբ քննվել է մեր «Հայ առասպելաբանություն» (Բեյրութ, 2000) մենագրության մեջ՝ ռուս անվանի հետազոտողներ Վլ. Տոպորովի և Վյ. Իվանովի հնդեվրոպական ամպրոպային առասպելի վերակազմած մոտիվների համեմատությամբ: Այդտեղ միաժամանակ ցույց ենք տվել այն վիպական ընդհանրությունը, որ ունի Դավթի վեպը խուռա-հեթիթական «Ուլիկումիի երգը» առասպելի հետ՝ հանձին Դավթի և խուռական Թեշուբի կերպարների:

«Մասնա ծոերը» միջնադարյան էպոս համարելու այս վարկածը ռուսալեզու հետազոտությունների ազդեցությունն է, որտեղ քննարկվել են Սիդի, Ռուլանդի երգերը, բյուզանդական «Դիգենիա Ակրիտաս» և այլն, բոլորն էլ իսկապես միջնադարյան էպոսներ են, որոնց հետազոտման և արժևորման չափանիշները տարածվել են «Մասնա ծոերի» վրա: Հայերն էլ ունեցել են իրենց միջնադարյան վեպերը, դիցուք, ինչպես «Պարսից պատերազմը» և «Տարոնի պատերազմը», որոնք մեզ են հասել գրավոր ավանդությամբ՝ ենթարկված դրանք հաղորդող հայ պատմիչների վերամշակմանը: Այդպես էլ գրական վերամշակման են ենթարկվել բոլոր եվրոպական միջնադարյան էպոսները: Իսկ «Մասնա ծոերը» մեզ է ավանդվել բանավոր եղանակով, ամբողջությամբ հենված բանավոր հին ավանդության պահանջների ու չափանիշների վրա՝ գրառված XIX-XX դդ. մեծ մասամբ կիսագրագետ ու անգրագետ վիպասացներից, որոնք հանդիսացել են բանավոր ավանդության կրողները՝ ժողովրդական մտածողության և հոգեբանության ամբողջական ներկայացուցիչները: Հաշվի չառնելով «Մասնա ծոերի» և հնադարյան էպոսների այս կարևորագույն տարբերությունները, նույն չափանիշով գնահատել այս երկու կարևոր վիպական ազդեցությունները, մեթոդաբանորեն ճիշտ չէ: «Մասնա ծոերը» հերոսավեպ կամ դյուցազնավեպ է՝ ձևավորված հնավանդ առասպելների հիմքի վրա՝ ենթարկված պարտադիր փոխակերպման, նորայնացման, պատմականացման, տարբեր դարաշրջանների ազդեցության համաժամանակեցման: Հետևաբար, այդ վեպի պոետիկական հետազոտելիս հետազոտողն այն պետք է ուսումնասիրի պատմատիպաբանական փոխակերպումների ճանապարհով և հաշվի առնի համաժամանակյա ու տարաժամանակյա փոխակերպումների ամբողջությունը և ենթարկի պատմական պոետիկայի չափանիշներին: Մա շատ դժվար խնդիր է, որի իրականացնողը պետք է ունենա մասնագիտական համապատասխան պատրաստվածություն և հայ ժողովրդական մշակույթի տարբեր բնագավառների քաջ իմացություն:

4. Հայոց «Մասնա ծոերը» ունի շուրջ 160 տպագիր ու անտիպ տարբերակներ, որոնք ըստ իրենց բարբառային և տեղական աշխարհագրական հատկանիշների բաժանվում են տիպաբանական երեք մեծ խմբերի՝ Մշո, Մոկաց և Մասնա: Եվ հայ ժողովրդական վեպի տարբերակների գիտական հրատարակությունը կատարվել է հենց այդ սկզբունքով: Վերջին տարիներին մեր հանձնարարությամբ պատումների տիպաբանական խմբերը մասնագիտական քննության ենթարկեց մեր ասպիրանտ Հ. Համբարձումյանը և պաշտպանեց որպես թեկնածուական ատենախոսություն:

Եվ ահա մեր ազգային մեծ վեպի պատմատիպաբանական փոխակերպումների պոետիկական ըստ էության հետազոտելու համար անհրաժեշտ է կազմել տիպաբանական այդ երեք խմբերի բոլոր պատումների մոտիվների համահավաք գիտական բնագրերը, որոնք կարող են կայուն բազա հանդիսանալ թե՛ պատումների բոլոր մոտիվների համահավաք հրատարակության և թե՛ այդ մոտիվների ու վիպական կերպարների համեմատական տարբեր մակարդակի հետազոտությունների համար: Մա մենք ինքներս առաջադրեցինք 2009 թ. Երևանում գումարված «Մասնա ծոերին» նվիրված միջազգային երրորդ գիտաժողովում:

Անկախ նշված դիտողություններից՝ Ա. Եղիազարյանի սույն ուսումնասիրությունը, թեպետ որոշ չափով միակողմանի, այնուամենայնիվ օգտակար է և գալիս է մասամբ լրացնելու «Մասնա ծոերի» ուսումնասիրությունը մեկ այլ կողմից: Եվ մեզ մնում է խորին շնորհակալություն հայտնել գրախոսին՝ դոկտոր Էրլ Ռ. Անդերսոնին, սույն հետազոտությունը գնահատելու և արժևորելու, ինչպես նաև դոկտոր Պիտեր Քաունին՝ Ա. Եղիազարյանի աշխատությունն անգլերեն թարգմանելու համար: